

ԳՈՐԾԱԴԻՐ

ՆԵՐԿԱՅԱՅՎԵՑ ԴԵՏԲՅՈՒԶԵԻ ԵՎ ՀԱԶՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՂԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 10-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:



Նիստի օրակարգում ընդգրկված ինը հարցերի թվում էին Վրաստանի կապիտալի շուկայի զարգացման 2022-2028 թվականների ռազմավարությունը և դրա 2022-2024 թվականների գործողությունների ծրագիրը, որը կնպաստի երկրի տնտեսական տարածքի միասնությանը, տնտեսական գործունեության ազատությանը և մրցակցային ու կայուն ներդրումա-

յին միջավայրի ստեղծմանը: Նշվեց, որ կապիտալի շուկայի զարգացման ռազմավարությունը հաստատվելու է (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՅՑ

ԱՏՈՐԱԳՐՎԵՑ ՎՐԱՑ-ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐ



Հոկտեմբերի 10-11-ին, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին պաշտոնական այցով գտնվում էր Ռումինիայում:

Ունեցավ Ռումինիայի նախագահ Կլաուս Յոհանիսի հետ: Հանդիպման արդյունքներով՝ Վրաստանի և Ռումինիայի միջև ստորագրվեց ռազմավարական համագործակցության խորացման հռչակագիր: Հռչակագրի համաձայն՝ կողմերը որոշում են կայացրել երկու երկրների միջև ամուրի համագործակցությունը վերափոխել ռազմավարական գործընկերության և այդ նպատակով հաստատել են իրենց պատրաստակամությունն առավել ամրապնդելու քաղաքական երկխոսության դիմադրական և բովանդակային, ամրապնդելու համագործակցությունը (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՄԵՐ ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԱԾ Է ՄԻԶՆՈՐՂԱԿԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՅՈՒՄ»



Ինչպես հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին՝ Վրաստանը մասնակցում է խաղաղ բանակցություններին, որպեսզի մեր տարածաշրջանում խաղաղություն լինի: Իր խոսքում, կառավարության ղեկավարը ընդգծեց տարածաշրջանում խաղաղության հաստատման կարևորությունը:

Մենք, Վրաստանը, որպես այս տարածաշրջանի նշանավոր երկրներից մեկը, մասնակից ենք այդ գործընթացներին: Մենք մասնակցում ենք խաղաղ բանակցություններին, մեր տարածաշրջանում պետք է խաղաղություն լինի: Ադրբեջանում, Հայաստանում, իհարկե, մեր հարեան երկրներում՝ Թուրքիայում, մենք շահագրգռված ենք ավելի համախմբված միասնությամբ, և դրա առաջին քայլերը նախանշված են, քանի որ (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

ՎԱՆ ԲԱՅԲՈՒԹՅԱՆԸ՝ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՅՈՒ ԴԱՏՎՈ ԲԱՐՁՐ՝ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ-ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՂ ՇՔԱՆՇԱՆԻ ԱՄՊԵՏ



Հոկտեմբերի 9-ին Թբիլիսիի Սուրբ Գեորգ առաջնորդանիստ եկեղեցում, Սուրբ պատարագին ներկա Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի, Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանի, հավատացյալների ներկայությամբ, հանդիսավորապես ընթերցվեց Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ Կոնդակը, որով Հայոց Հայրապետը, բարձր գնահատելով Վան Բայբուրթյանի գործունեությունը, «Վրաստան» հասարակական-քաղաքական թերթի գլխավոր խմբագիր և համայնքային գործիչ, Հայոց եկեղեցու նվիրյալ հետևորդ, Վրաստանի և Հայաստանի պետական կառույցների, հոգեւոր բարձրագույն ատյանների բազմակի անդամ, հայ-վրացական բարեկամության ջատագով, Թբիլիսիի պատվավոր քաղաքացի Վան Բայբուրթյանին պարգևատրեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվի բարձր՝ Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ շքանշանով: (Խորագրի շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՎՐԱՍՏԱՆԸ ՆԵՏՅՍ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

Հոկտեմբերի 14-ին Վրաց Ուղղափառ եկեղեցին նշեց «Տասներկու սուրբ առաքյալների միաբանությունը»՝ Սվետիցխովորան («Սուրբայուն»): Տոնի կապակցությամբ Սցխեթայի Սվետիցխովիլի տաճարում տրվեց տոնական պատարագ, որը մատուցեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը:

Հիշեցնենք, որ Սվետիցխովորան նշվում է տարին երկու անգամ՝ հոկտեմբերի 14-ին և հուլիսի 13-ին: Հոկտեմբերի 14-ին եկեղեցին նշում է Քրիստոսի զգեստի հիշատակը, իսկ հուլիսի 13-ին՝ Քրիստոսի բոլոր առաքյալներին:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ԴԵՎՎԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀՈՈՍՈՒՄ

Հոկտեմբերի 11-ին, Հռոմում, Արեւելյան գործընկերության և Մերձբալթյան երկրների բարձրաստիճան ներկայացուցիչների մասնակցությամբ, անցկացվող «Եվրոպա տարածաշրջանի» բարձր մակարդակի միջոցառման շրջանակներում, կայացավ Վրաստանի կառավարության աշխատակազմի ղեկավար Ռեւազ Ջավելիձեի և Հայաստանի վարչապետի աշխատակազմի ղեկավար Ե. «Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան»-ի ղեկավար Արայիկ Հարությունյանի հանդիպումը:



Հանդիպմանը քննարկվեցին երկու երկրներում «Բաց կառավարման գործընկերության» (ԲԿԳ) օրակարգերը, դրանց ընթացիկ իրականացումը և՛ թե ինչպե՞ս կարող են երկու կառավարություններն աջակցել միմյանց ԲԿԳ օրակարգային բարեփոխումներն իրականացնելու հարցում: Քննարկվեցին հանրային կառավարման բարեփոխումներին, ռազմավարական ծրագրերին և ոլորտային այլ խնդիրներին ուղղված հարցեր: Երկուստեք պայմանավորվեցին սերտորեն համագործակցել փորձի փոխանակման և բարեփոխումների օրակարգի շուրջ՝ փոխադարձ այցերի և նոր համագործակցային մեխանիզմների միջոցով:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՇՈՏ ՍՄԲԱՏՅԱՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԾԱՆԱՀՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Վրաստանում Հայաստանի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը շարունակում է ճանաչողական հանդիպումները Վրաստանի իշխանությունների ներկայացուցիչների հետ:

Մասնավորապես, Վրաստանում Հայաստանի դեսպանը հանդիպում ունեցավ Վրաստանի փոխվարչապետ, Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար Լեւան Դավիթբաշվիլու, փոխվարչապետ, Մշակույթի, սպորտի և երիտասարդության նախարար Թեա Ծուլուկիանու, Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Թեա Ավալիեղիանու, Արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեի, Բարձրագույն դատարանի նախագահ Նինո Քաղազիձեի, երկրի կառավարության աշխատակազմի տարածաշրջանային հարցերով վարչության տնօրեն Լերի Բարնաբիշվիլու հետ: Հանդիպումներում կողմերը քննարկեցին Վրաստանի և Հայաստանի միջև տարբեր ոլորտներում համագործակցության, երկրորդ օրակարգում առկա հարցերի լայն շրջանակ: Կարելի էր երկու երկրների տարբեր ոլորտների համակարգող գերատեսչությունների միջև առկա արդյունավետ փոխգործակցության շարունակականության ապահովումը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԵՐԵՔ ՏԱՐԻ ԸՆԴՄԻՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ, ՆՈՐԻՑ ՏՈԼՄԱՅԻ ՓԱՌԱՏՈՆ

Հոկտեմբերի 9-ին, կիրակնօրյա պատարագից հետո, Թբիլիսիում Սուրբ Գեորգ առաջնորդանիստ եկեղեցու բակում, տեղի ունեցավ հայ համայնքում ավանդական դարձած տոլմայի փառատոնը:

Փառատոնն իրականացվեց Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միության (Նախագահ՝ Սուսաննա Խաչատրյան) նախա-

ծնունդով, Վիրահայոց թեմի առաջնորդարանի հովանավորությամբ և Սբ. Գեորգ «Եկեղեցա-Սուսաննա Խաչատրյան» (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳՈՐԾԱՌԻ

ՆԵՐՎԱՅԱՅՎԵՑ ԴԵՏԲՅՈՒԶԵԻ ԵՎ ՀԱԶՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՂԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մահունչ է Վրաստանի Զարգացման ռազմավարությանը՝ Vision 2030 եւ Եվրամիության հետ ստորագրված Ասոցացման համաձայնագրին:

Ռազմավարությունը մշակվել է համապատասխան պետական գերատեսչությունների, մասնավոր հատվածի ներկայացուցիչների, Ասիական զարգացման բանկի փորձագետների եւ խորհրդատուների ակտիվ ներգրավվածությամբ:

Օրակարգային հարցերի թվում գործադիրը քննակեց նաեւ հաջորդ տարվա պետքային հիմնական պարամետրերը: Մասնավորապես նշվեց, որ 2023 թվականի ֆինանսական գլխավոր փաստաթուղթը ձեւակերպվել է այն դրական մի-

տումների հիման վրա, որոնք տնտեսական աճի տեսանկյունից վավերացվել են վերջին երկու տարիների ընթացքում:

Նշվեց, որ 2023 թվականի բյուջեն ծրագրվեց մակրոտնտեսական համեմատաբար պահպանողական ցուցանիշների հիման վրա, եւ տնտեսական իրական աճը նախատեսում է 5 տոկոսի շրջանակներում, համախառն ներքին արտադրանքը կանխագծվում է 79,6 միլիարդ լարի, բյուջեի եկամտային մուտքը հաշվարկվել է 18,5 միլիարդ լարի, իսկ բյուջետային պակասորդը կազմելու է 2,8 տոկոս:

Նիստում նշվեց, որ հաջորդ տարվա համար բյուջեից բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարարության համար կհատկացվի 688 միլիոն լարի, արդարադատության նախարարությանը

369,4 միլիոն լարի, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարարությանը՝ 3,7 միլիոն լարի, ժողովրդական պաշտպանի աշխատակազմին՝ 9,3 միլիոն լարի:

Իրակի Ղարիբաշվիլին, հանրագումարելով քննարկված հարցերը, հայտարարեց, որ 2023 թվականի պետքային ձեւավորելիս հարկ է առավել նշանակալի ուշադրություն հատկացնել կրթության, սոցիալական պաշտպանության, բնականաբար նաեւ պաշտպանության ոլորտներին, առավելագույն ֆինանսավորել այդ ոլորտներով իրականացվելիք նախագծերն ու ծրագրերը: Վարչապետը կոչ արեց՝ հնարավորինս մոբիլիզացնել միջոցները բնաչության համար կենսական նշանակալի հիմնախնդիրների կարգավորման համար:



ՍԱԿ

ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲՈՆԱԿՑՈՒՄԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՂ ԲԱՆԱԶԵՎ



ՍԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի արտահերթ նստաշրջանում՝ 143 կողմ, 5 դեմ ձայներով կողմ են քվեարկել Ռուսաստանի կողմից Ուկրաինայի Դոնեցկի, Խերսոնի, Լուգանսկի եւ Զապորոժիեյի տարածքների բռնակցումը դատապարտող, Վրաստանի կողմից համահեղինակված բանաձեւին: Բանաձեւին դեմ են քվեարկել Ռուսաստանը, Բելառուսը, Գյուստինյայի Կորեան, Սիրիան եւ Նիկարագուան: Չեռնայիս հ մնացել 35 անդամ:

G7

ՊԱՏՃԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԵԼԱՌՈՒՍԻ ԴԵՄ

G7-ի ղեկավարները հոկտեմբերի 11-ին քննարկեցին Բելառուսի դեմ լրացուցիչ պատժամիջոցներ սահմանելու հնարավորությունը՝ Ուկրաինայի հակամարտության մեջ նրա ներթաշվելու դեպքում:

Նշենք, որ Միմսկն արդեն գտնվում է Եվրամիության պատժամիջոցների ներքո: «Հարկավոր է Բելառուսին նախազուշացում հղել, որ ցանկացած լրացուցիչ աջակցություն ռազմական գործողություններին, որը Ռուսաստանը վարում է Ուկրաինայում, կհանգեցնի լրացուցիչ պատժամիջոցների»,- ասված է հայտարարության մեջ:

ՂՐՋՍԱՆ

ՀԱՊԿ-Ի ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ

Ղրղզստանի պաշտպանության նախարարությունը չէղյալ է հայտարարել ՀԱՊԿ-ի «Անխախտ եղբայրություն 2022» զորավարությունները:

«Անխախտ եղբայրություն 2022» զորավարությունները չէղյալ են հայտարարվել ղեկավարության որոշմամբ»,- հայտնեցին գերատեսչությունում:

ՀԱՊԿ երկրների «Անխախտ եղբայրություն 2022» զորավարությունները պետք է տեղի ունենային Ղրղզստանի «Էդելվեյս» զորավարժարանում, հոկտեմբերին:

ԱՅՑ

ԱՏՈՐԱԳՐՎԵՑ ՎՐԱՑ-ՈՒՄԻՆԱԿԱՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նը ղլորտային մակարդակում՝ խթանելով Ռուսիայի եւ Վրաստանի միջեւ կապը:

Վրաստանի նախագահը,

պաշտոնական այցի շրջանակներում, հանդիպումներ ունեցավ նաեւ Ռուսիայի վարչապետ Նիկոլայ Չուլկոյի, Սենատի նախագահի պաշտոնակատար Ալիմա Գորգոլի եւ Պատ-

գամավորների պալատի նախագահ Մարտել Չոլակոյի հետ:

Այցի շրջանակներում Սալունե Չուրաբիշվիլին այցելեց Բուխարեստի Սուրբ Անթիմոս Իվերելու մենաստանը, հան-

դիպում ունեցավ Պատրիարք Վառլամ Պլոբեշտիումի հետ: Վրաստանի նախագահը մենաստանին, որպես նվեր, հանձնեց Սուրբ Նինոյի սրբապատկերը:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՄԵՐ ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԱԾ Է ՄԻԶՆՈՐՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

առաջին հանդիպումը տեղի ունեցավ, Հայաստանի վարչապետը հանդիպեց Թուրքիայի նախագահին, ինչպես նաեւ Ադրբեջանի նախագահին: Վրաստանը նույնպես ներգրավված է միջնորդական գործընթացում,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Իր հերթին, Վրաստանի արտաքին

գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլին նշեց, որ Վրաստանը միշտ պատրաստ է հարթակ տրամադրել իր հարավային հարեւաններին՝ հանգիստ ու խաղաղ երկխոսություն վարելու, տարածաշրջանում խաղաղություն հաստատելու համար:

- Մենք հատուկ վստահություն ենք վայելում մեր հարեւանների կողմից եւ ապագայում միշտ պատրաստ ենք, որ Վրաստանը՝ Թբիլիսին դառնա մի վայր,

որտեղ մեր հարավային հարեւանները կկարողանան հանգիստ երկխոսություն վարել՝ բանակցություններում կոնկրետ արդյունքների հասնելու եւ խաղաղություն ու կայունություն հաստատելու համար: Վրաստանի համար թիվ մեկ առաջնահերթությունը մեր տարածաշրջանում խաղաղությունն է անվտանգության ապահովումն է,- ընդգծեց Վրաստանի արտգործնախարարը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԵՐԵՔ ՏԱՐԻ ԸՆԴՄԻՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ, ՆՈՐԻՑ ՏՈՆՍԱՅԻ ՓԱՌԱՏՈՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

սեր կանանց» (նախագահ՝ Սերգեյ Մեյրապետյան-Չախույան) եւ «Հայարտուն» կենտրոնի աջակցությամբ:

Վիրահայոց թեմի առաջնորդ Սեր Կիրակոս վարդապետ Դավթյանի, Քվենո Քարթլիի տարածաշրջանի Շահունյան, Կարմիր եւ Աղբյուրի գյուղերի հոգեւոր հովիվ Սեր Զավեն վարդապետ Յազիչյանի հանդիսապետությամբ եւ Վրաստանում Հայաստանի արտա-

կարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանի պատվավոր ներկայությամբ կիրակնօրյա Սուրբ պատարագ մատուցեց Սեր Վիրապ քահանա Ղազարյանը:

Հավարտ Սբ. պատարագի՝ Սեր Զավեն վարդապետ Յազիչյանը ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ Կոնդակը՝ Վան Բայքությունից Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվի բարձր՝ Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ շքանշանով պարգևատրելու մասին:

Օրվա տոնական տրամադրությունը շարունակվեց եկեղեցու բակում, որտեղ իրար կողքի շարված էին Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միության, Սբ. Գեորգ «Եկեղեցասեր կանանց», թեմի «Հայարտուն» եւ «Հովհաննես Թումանյանի տուն» կենտրոնների եւ քաղաքում գործող այլ գեղարվեստական համայնքների ու



բազում հավատացյալների ներկայացրած տարբեր տեսակի բուրդեղեղեղ տոլմայի շուրջ երեք տասնյակ կաթսաներ:

ՈՒՄՍ - ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՈԱԶՄԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆ. 233-ՐԴ ՕՐ

ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ԶՈՂՎԵՑ 20-ՐԴ ՎՐԱՅԻ ՄԱՐՏԻԿԸ

Ուկրաինայում եւս մեկ վրացի մարտիկ է զոհվել: Ուկրաինայում Վրաստանի դեսպանատան տվյալներով՝ վրացի մարտիկը զոհվել է Դոնեցկի մոտ: Առկա տեղեկությունների համաձայն՝ վրացի մարտիկը Ուկրաինայի զինված ուժերում ծառայում էր 2014 թվականից:

ԲՈՂՈՔԻ ՑՈՒՅՑ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ

Հոկտեմբերի 10-ին, Վրաստանի խորհրդարանի մոտ, տեղի է ունեցել վրացի եւ ուկրաինացի ակտիվիստների ու փախստականների կազմակերպած ցույցը: Մի քանի հարյուր մարդ շտապել էր Ռուսթավելու պողոտա՝ իր վրդովմունքն արտահայտելու Ուկրաինայի վրա ռուսական բանակի ձեռնարկած զանգվածային հրթիռային հարձակումների կապակցությամբ:

ՊԱՅԹՅՈՒՆ՝ ՂՐԻՄԻ ԿԱՄՐՋԻ ՎՐԱ

Ղրիմի կամրջի վրա, որը բռնազավթված Ղրի-

մը կապում է Ռուսաստանի հետ, պայթյուն է իրականացվել: Կամրջով երթևեկությունը դադարեցվել է:

Հետաքննությունը վարող Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության տվյալներով՝ բռնատարը Բուլդարիայից Վրաստան է հասել նավով, սպա Հայաստանով: Բեռի փոխադրման գործում ներգրավված էին Ուկրաինայի, Վրաստանի եւ Հայաստանի քաղաքացիներ:

Վրացական եւ հայկական կողմերը կտրականապես հերքում են իրենց մասնակցությունը կամրջի պայթեցման գործում:

Ղրիմի կամրջը կառուցվել է Վլադիմիր Պուտինի պատվերով եւ բացվել 2018 թվականին: Ռուսաստանն այս կամրջը օգտագործում է Ուկրաինայի հարավում գտնվող գործարարներին մատակարարելու համար:

ՈՒՄՍԱԿԱՆ ՕԿՈՒՊԱՑԻՈՆ ՈՒՇԵՐԸ ՀՐԹԻՈՎԱԿՈՇԵԼ ԵՆ ԿԻԵՎԸ, ՄՅՈՒՄ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Ի պատասխան Ղրիմի կամրջի պայթեցման՝ ռուսական օկուպացիոն ուժերը հրթիռակոծել են Ուկրաինայի

մայրաքաղաք Կիևը: Միաժամանակ պայթյուններ են իրականացվել Լվովում, Դնեպրոպետրովսկում, Խմելնիցկում եւ Ժիտոմիրում, հարձակվել են Սլավյանսկի վրա:

Ռուսական օկուպացիոն ուժերը Ուկրաինայի տարածքի ուղղությամբ արձակել են 75 հրթիռ, որոնցից 41-ը չեզոքացվել է ուկրաինական հակաօդային պաշտպանության համակարգի կողմից:

ԲՈՆԱԶԱՎՈՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱԶՏԱԳՐՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«Ուկրաինայի զինված ուժերն այս շաբաթ ազատագրել են 776 քառակուսի կիլոմետր տարածք, ազատագրել են 29 բնակավայր: Այդ թվում վեցը Լուգանսկի մարզում», - տեսաուղերժում հայտարարել է Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Ջելենսկին:

Ընդհանուր առմամբ, հարձակման սկզբից մինչ այժմ, ազատագրվել է 2 434 քառակուսի կիլոմետր տարածք եւ 96 բնակավայր:

Պատրաստեց ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

«ԺՈՂՈՎՐԴԻ ՈՒԺ»-Ն ԱԿՏԻՎՈՐԵՆ ԳՈՐԾՈՒՄ Է ՏԱՐԱԾԱՆԵՐՉԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՆՈՒՅՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒԺԵՂԱՅՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ

Ինչպես արդեն հաղորդել ենք, «Վրացական երազանք» կառավարող թիմից հեռացած չորս պատգամավորներ՝ Սոզար Սուբարին, Միխեյլ Դավելաշվիլին, Գուրամ Մաճարաշվիլին եւ Դմիտրի Խունդաձեն հիմնեցին «Ժողովրդի ուժը» շարժումը, որին այս օրերին միացան եւս հինգ պատգամավորներ՝ Էկա Սեփաշվիլին, Վիկտոր Զափարիձեն, Դավիթ Կաճարավան, Դաջի Բերախան եւ Զաալ Միքելաձեն:

Ներկա դրությամբ՝ շարժումը խորհրդարանում ներկայացված է 9 պատգամավորով եւ, ինչպես նշեց շարժման հիմնադիր եւ ղեկավար Սոզար Սուբարին, խորհրդարանում իր մեծությամբ քաղաքական խումբը երրորդն է, ուստի, կկարողանա ազդեցություն գործել օրենսդրական մարմնի աշխատանքի վրա:

Նոր անդամների միավորման կապակցությամբ անցկացված մամուլ ասուլիսում նշվեց, որ «Ժողովրդի ուժը» շարժումը ներկայումս ակտիվ աշխատանքներ է տանում՝ տարածաշրջաններում իրենց ներկայացուցչությունների ուժեղացման ուղղությամբ:

Նշենք, որ իրենց խմբակցությունից պատգամավորների հեռացումը, հետեւաբար՝ խորհրդարանական մեծամասնությանը կորուստը, այնքան էլ չի անհանգստացնում «Վրացական երազանքի» ղեկավարներին: Մասնավորապես, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, անդրադառնալով «Ժողովրդի ուժը» շարժման խմբակցության համալրման թեմային, հայտարարեց, որ ցանկացած անձ իրավունք ունի անդամակցելու իր ուզած կազմակերպությանը:

- Այսօր երկրում ժողովրդավարություն է, ցանկացած մարդ,



ցանկության դեպքում, կարող է անդամակցել այս կամ այն կազմակերպությանը: Սա նրանց սահմանադրական իրավունքն է: Մենք ունենք մեր ամուր դիրքորոշումը, մեր ընտրությունը, սա վերադառնալուստան ինտեգրումն է, որն արտացոլված է Սահմանադրության մեջ, եւ ոչ ոք չի կարող փոխել այս ընտրությունը: Հանգիստ եղեք,- հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին: «Վրացական երազանքի» նախագահ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ «Ժողովրդի ուժը» շարժումը սերտորեն կհամագործակցի կառավարող թիմի հետ, որպեսզի ընդունվեն երկրի համար կենսական նշանակության օրենքներ: Միաժամանակ, Կոբախիձեն հավելեց, որ «Արժեքների հարցում «Վրացական երազանքի» ու «Ժողովրդի ուժի» միջեւ էական տարբերություն չկա», իրենց նախկին համակուսակցականներին հետ ունեն միայն «տատիկական տարածայնություններ»:



ՎՐԱՍԱՆԸ՝ ՄԱԿ-Ի ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՊԱՏ

Նյու Յորքում, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 77-րդ նստաշրջանի շրջանակներում, Վրաստանը՝ 178 ծայնով, երկրորդ անգամ ընտրվեց ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի անդամ՝ 2023-2025 թվականների ժամանակահատվածի համար:

Նշենք, որ Մարդու իրավունքների խորհրդի անդամներն ընտրվում են տարածաշրջանային խմբերից՝ աշխարհագրական հիմունքներով: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդն ընտրվում է երեք տարի ժամկետով, բաղկացած է 47 անդամ երկրներից, եւ նրա գործառույթն է՝ ապահովել մարդու իրավունքների համընդհանուր պաշտպանությունը, արձագանքել աշխարհում մարդու իրավունքների խախտումներին եւ մշակել համապատասխան առաջարկություններ: Խորհուրդը գործում է ժնելում:

Վրաստանն առաջին անգամ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի անդամ է ընտրվել 2015 թվականին:

ԱՆՑԿԱՑՎԵՑ «ԳԻՆՈՒ ՕՐԵՐ» ՓԱՈԱՏՈՆ

Հոկտեմբերի 10-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին թելավիում մասնակցեց «Գինու օրեր» փառատոնի բացմանը:

Թելավիում, «Գինու օրերի» շրջանակներում, Երեկվե թագավորի պալատի բակում կազմակերպվեց վրացական գինու համտես եւ ցուցահանդես-վաճառք:

Միջոցառման շրջանակներում անցկացվեցին դերասանների երթ, նկարչության ու կավագործության վարպետության դասեր: Փառատոնի շրջանակներում կազմակերպվեցին նաեւ էքսկուրսիաներ Թելավիի գինեգործարաններ: Գործել է «8000-ամյա շարունակական ավանդույթ» խորագրով, գինու ցուցահանդեսը:

ՎԱՏԻՎԱՆԻ ՂԵՍՊԱՆԻՆ ԱՐԳԵԼԵՑԻՆ ՄՈՒՏՔԸ ՈՒՂՈՎՓԱՈ ԵԿԵՂԵՑԻ

Քութայիսիում Վատիկանի դեսպանը չկարողացավ մուտք գործել տեղի նախկին կաթոլիկ, ներկայիս՝ ուղղափառ եկեղեցու բակը:

Քութայիսիի կաթոլիկ եկեղեցու հոգևորականներն ու հավատացյալներն անցկացրին երթ՝ Վրաստան բերված Վաթիմի Աստվածածնի արձանիկով: Երթը գլխավորում էր Վրաստանում Վատիկանի դեսպան, արքեպիսկոպոս Խոսե Ավեգինո Բետանկուրը: Արարողությանը հրավիրված էին Քութայիսիում բնակվող մյուս դավանանքի ներկայացուցիչներ:

Երթի ժամանակ, արքեպիսկոպոսի գլխավորությամբ, մի խումբ ուխտագնացներ մոտեցան Քութայիսիի նախկին կաթոլիկ եկեղեցուն, որը ներկայումս պատկանում է Վրաց Ուղղափառ եկեղեցուն եւ վերածվել է Սուրբ Աստվածամոր տաճարի: Կաթոլիկները պատրաստվում էին մուտք գործել բակ, թեւ այն շրջափակված էր:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿԱՆ ԿՈՒՐԱԸ (14 հոկտեմբերի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

Տարադրամ	Լարի
1 ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.7741
1 ԵՎՐՈ	2.6970
100 ՌՈՒՐԼԻ	4.3673
1000 ԴՐԱՄ	6.8742

ԲՈՒՐ

ԹԲԻԼԻՍԻ ԴԵՏՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Է ՏՎԵԼ



Հոկտեմբերի 7-ին, Թբիլիսիի պետական համալսարանի (ԹՊՀ) ղեկավար Գիորգի Շարվաշիձեն վաղաժամ հրաժարական տվեց: Նա իր որոշման մասին արդեն տեղեկացրել է գիտխորհրդին, արդեն թողել է պաշտոնը, սակայն դեռեւս մնում է ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար:

Պետհամալսարանի ղեկավարի հրաժարականը որոշակիորեն պայմանավորված է բուհի ուսանողների բողոքի ցույցերով, որտեղ ուսանողները բարձրացնում էին ղեկավարի ընտրության կարգի փոփոխման պահանջը: Այդ նպատակով ձեւավորված «Մայիսյան ուսանողական շարժման» պահանջն է՝ նախ լուծարել գիտխորհուրդը, որն այսօր ղեկավարին ընտրում է գաղտնի քվեարկությամբ, նաեւ՝ ուսանողական հանրակացարաններ կառուցել, ուսանողների համար բնակարանային սուբսիդավորում սահմանել: Ուսանողները նշում են, որ եթե իրենց պահանջները չկատարվեն, բողոքի ակցիաները շարունակվելու են:

Բուհի արդեն նախկին ղեկավարը հայտարարեց, որ Վրաստանի կառավարությունը 27 մլն լարի է հատկացրել մշակութային ժառանգության հուշար-

ձան հանդիսացող համալսարանի երկրորդ մասնաշենքի վերանորոգման եւ վերականգնման աշխատանքների համար: Վերանորոգման աշխատանքների արդյունքում՝ շենքը համապատասխանեցվել է միջազգային չափանիշներին եւ ուսումնական գործընթացը լիովին վերականգնվել է սեպտեմբերի 19-ից:

Նշենք, որ ԹՊՀ-ի ղեկավարի պաշտոնակատարի թեկնածուների գրանցումը սկսվել է հոկտեմբերի 11-ին եւ ավարտվել հոկտեմբերի 13-ին: Ներկա դրությամբ, Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանի ղեկավարի պաշտոնակատարի պաշտոնին թեկնածություն է առաջադրել միայն մեկ թեկնածու՝ ԹՊՀ-ի պրոֆեսոր եւ Վրաստանի Շոթա Ռուսթավելու անվան ազգային գիտական հիմնադրամի ղեկավար Ջաբա Սամուշիան:

ՈՂԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՂԵՊ

ԱՆՓՈՒԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԶՈՐՎԵՑ ԵՐԵՒԱ

ԿԱՆԱ ԿԱԼԱԶԵ. «ԵՆԹ ՄԵՂՎՈՐ ԵՄ, ՊԱՏՐԱՍ ԵՄ ՊԱՏԱՍԽԱՆ ՏԱԼ ՕՐԵՆՔԻ ԱՈՒՑ»

Հոկտեմբերի 13-ին, Թբիլիսիի Վակեի զբոսայգում տեղի ունեցած ողբերգական միջադեպի արդյունքում, հոսանքահարված երեխաներից մեկը մահացավ, իսկ երկուսը՝ ծանր վիճակում գտնվում են հիվանդանոցում:

Թբիլիսիի Վակեի այգում՝ մուտքի մոտ, շատրվանների ավազան մտած երեխաները հոսանքահարվել են: Հոսանքահարվելու հետեւանքով վիրավորված, 13-ամյա աղջիկը կլինիկայում մահացել է, իսկ հոսանքահարումից տուժած երեխաներից մեկը դեռ միացված է արհեստական շնչառության սարքին:

Տեղի ունեցած ողբերգական միջադեպի կապակցությամբ իրենց ցավակցություններն են հայտնել Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին, Համայն Վրաստանի Կաթոլիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, կրթության նախարար Միխեյլ Չխենկելին:

Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն հայտարարեց, որ հետաքննությունը սկսվել է, ներգրավված են բոլոր համապատասխան գերատեսչությունները եւ ակնհայտ է, որ բոլորը կպատժվեն օրենքով:

- Գրինսերվիսը եղել է աշխատանքների կենտրոնական կա-

պալառում, ենթակապալառուների մասին կղժվարանամ ասել: Ծրագիրն ավարտվել է վաղուց:

Ամենադժվար թեման է, հոգնել ենք: Դա բոլորի մեծ պատասխանատվությունն է, եւ բոլորին կտրվի համապատասխան պատասխան,- ասաց Կախա Կալաձեն եւ հավելեց, որ եթե մեղավոր է, ապա, պատրաստ է պատասխան տալ օրենքի առջեւ:

Նշենք, որ Վակեի զբոսայգու վերանորոգված շատրվանների հանդիսավոր բացումը տեղի է ունեցել հոկտեմբերի 12-ին: «Գրինսերվիս»-ը 13 մլն լարիի վերականգնողական աշխատանքներ է կատարել Վակեի այգում գտնվող շատրվանների վրա: Ըստ մրցութային փաստաթղթերի՝ ավարտված աշխատանքների վերջին ստուգումն իրականացվել է 2022 թվականի օգոստոսի 29-ին:



ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՃԱՆԱԳՈՒՄ ԵՆՔ ԶԵՉ ԵՎ ԲԱԶԱՏԵՂՅԱԿ ԵՆՔ ԶԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ»

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՈՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ ՏԻԱՐ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹԵԱՆ



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Սեր օրհնութիւնն ու գնահատանքն ենք յղում մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր գաւակիդ:

Մեծարգոյ Տիար Բայբուրթեան, ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ քաջատեղեակ ենք Ձեր լրագրողական, խմբագրական, քաղաքական ու հասարակական բազմաբովանդակ գործունեութեանը:

Դուք պետական տարբեր պաշտոններ եւ պատասխանատու յանձնառութիւններ եք ստանձնել Վրաստանում ծառայելով երկրի առաջընթացին եւ բոլոր հանգամանքների մեջ միշտ ջանակով աջակցութիւն բերել Վրաստանի Հայոց թեմի առաքելութեան բարուք իրականացման, Վրաստանի հայ համայնքի զօրացման ու համախմբման գործին: Երկրի անկախացման դժուարին տարիներին Ձեր հիմնադրած «Վրաստանի Հայ մշակութային բարեգործական ընկերութիւնը», յետագայում «Վրաստանի հայերի միութիւնը» կարելի էր գործունեութիւն իրականացրէք վիրահայոց կեանքում արժանացնելով Ձեզ հայ համայնքի անկեղծ յարգանքին: Յատկապէս գնահատարժան է Ձեր մերթուրումը Թբիլիսիում հայկական դպրոցների եւ մշակութային օջախների պահպանման եւ զարգացման գործում, ինչպէս նաեւ հետեւողական ջանքերը Վրաստանի խորհրդարանում:

նում՝ ի խնդիր Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման:

Անձնապէս ճանաչելով Ձեզ իբրեւ հաւատաւոր եւ նախանձախնդիր հայորդու՝ բազում անգամներ առիթ ենք ունեցել հիւրընկալելու Ձեզ համայն հայութեան հոգեւոր կենտրոնում, հաղորդ դառնալ Ձեր ազգօգուտ ծրագրերին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ որդիական անկեղծ զգացումներին:

Մեծարգոյ տիար Բայբուրթեան, բարձրօրէն գնահատելով տասնամեակների Ձեր վաստակը եւ նշանակալի աւանդը ազգային-եկեղեցական կեանքում, ընդառաջ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ հոգեւորիկ Տ.Կիրակոս վարդապետ Դաւթեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՄԱՅՐԱԿ-ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Բարձրեալ Տերը շնորհի Ձեզ արելատ կեանքի երկար տարիներ՝ շարունակելու Ձեր արգասաւոր ծառայութիւնը Վրաստանին, հաւատաւոր մեր ժողովրդին եւ մեր Սուրբ Եկեղեցուն: Թող Ամենակալը Աստուած իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու մերթոյ պահի ու պահպանի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջութիւն եւ ամենայն բարիք:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՊԱՏՎՈ ԲԱՐՁՐ ՀԲԱՆՇԱՆ՝ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԱՆՎԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ

«Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթեանին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն պատվով անձնաբարձր շքանշանով պարգեւատրելու առթիվ՝ խմբագրության եւ շքանշանակրի հասցեով ստացվել են շնորհավորանքներ:



«Վրաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանության եւ անձամբ իմ անունից շնորհավորում են վիրահայ համայնքի անվանի ներկայացուցիչ, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթեանին՝ մայրաքաղաք Թբիլիսիի պատվավոր քաղաքացու կոչման արժանանալու եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ պատվո բարձր շքանշանով պարգեւատրվելու կապակցությամբ:

Այս բարձր պարգևները վկայություն են պարոն Բայբուրթեանի՝ հայ եւ վրաց ժողովուրդների միջեւ բազմադարյա բարեկամական հարաբերությունների զարգացման գործում ունեցած մեծ ավանդի:

Մաղթում են պարոն Բայբուրթեանին քաջառողջություն եւ անսպառ եռանդ՝ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ ավանդական բարեկամական կապերի խորացման ուղղված իր գործունեության շարունակման համար:

ԱՇՈՏ ՍՍԲԱՏՅԱՆ
Վրաստանում Հայաստանի Հանրապետության դեսպան

ՎԱՆԸ ԱՄՈՒՐ ԿԱՄՈՒՐՋ Է ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՅ ՈՒ ՎՐԱՑՈՒ, ԱՅԼԵՎ... ՀԱՅ ՈՒ ՀԱՅԻ ՄԻՋԵՎ



Արամյանցիներս սիրով շնորհավորում ենք մեր սիրելի բարեկամ ու թանկ ընկերոջը՝ Վան Բայբուրթեանին, բարձր ու մեծարժեք պարգևի համար: Պատվավոր քաղաքացու կոչումը, կարծում ենք ամենախոսուն է Վանի պարագայում ու ամենարժանին, քանի որ նա վաղուց վաստակել է այս կոչումը թբիլիսցու իր իսկական կերպարով, այն է՝ ցանկացած մարդու, ցանկացած պահի ձեռք մեկնելու բացառիկ կարողությամբ: Վանը վաղուց կամուրջ է, խաղաղության ու ամուր բարեկամության կամուրջ ոչ միայն Վրաստան-Հայաստանի, հայ ու վրացու, այլև հայ ու հայի միջեւ: Մեզ շատերիս հենց ինքն է

կատել, ծանոթացրել, բարեխոսել, միջնորդել, անհրաժեշտ ու ճիշտ կամուրջ դարձել հետագա ընկերության, առաջխաղացման ու հաջողության համար: Թող անհամեստ չթվա, բայց հիրավիորեն նա ամենաճանաչված վիրահայն է ու դրանով հպարտ ենք,

կարծում ենք, բոլորս: Արդեն երկար տարիներ «Վրաստան» թերթի ծնունդն ապահովելով՝ նա նաեւ վիրահայ մյուս մշակութային ու կրթական օջախներին ամենաճանկատազրական պահերին օգնում ու սատարում է՝ հնարավորությունից էլ դուրս շրջանակում: Մեր Վանի հունորն ու իմաստությունը չեն պակասում տարվա ցանակած եղանակին: Տարվա բոլոր եղանակներին նա հարգված է, տարվա բոլոր եղանակներին՝ պահանջված: Վանն ամենուր է ու այնտեղ, ուր կա, մշտապես փորձում է դատել քաղաքագետի իր սուր դատողությամբ ու անմախաղէպ հեռատեսությամբ: Այսօր Թբիլիսիի մեր պատվավոր քաղաքացիները՝ Գիվի Շահնազարն ու Վան Բայբուրթեանը, մեր կենդանի լեզենդն են, ովքեր պատիվ են բերում մեզ՝ վիրահայերիս:

ԱՐՄԵՆ ԲԱՅԱՆՊՈՒՐՅԱՆ
Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար

ՏԱՐԱԾԱՆԵՐԱՆ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ, ԱԽԱԼՑԻՆԵՈՒՄ ԵՎ ՆԻՆՈՑՄԻՆԴԱՅՈՒՄ

Ախալքալաքի մունիցիպալիտետի սակրեբուլյոյում Վրաստանի ժողովրդական պաշտպանի գրասենյակի Արեւելյան Վրաստանի վարչության եւ Իրավահավասարության դեպարտամենտի աշխատակիցները վարժանք անցկացրին Ախալքալաքի մունիցիպալիտետի ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների համար՝ սեռական ոտնձգությունների վերաբերյալ:



Նմանատիպ հանդիպում անցկացվեց նաեւ Ախալցխիսի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետներում:

Տեղեկատվական բնույթ կրող հանդիպման հիմնական նպատակն էր բացահայտել սեռական ոտնձգության դեպքերը, դրա կանխարգելումն ու եղած մեխանիզմների կատարելագործումը:

ՄԱՌՆԵՈՒԼԻ-ԹԵԹՐԻԾՂԱՐՈ-ԾԱԼԿԱ ԵՎ ԹԵԹՐԻԾՂԱՐՈ-ԲՈԼՆԻՍԻ ԸՆՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՎՏԻՎՈՐԵՆ ԱՌԱՋ Է ՏԱՐՎՈՒՄ

Մառնեուլի-Թեթրիծղարո-Ծալկա, միջպետական նշանակության, ավտոճանապարհի 16 կմ-անոց հատվածում վերականգնողական աշխատանքները շարունակվում են ակտիվ ռեժիմով, հայտնում է ավտոճանապարհների դեպարտամենտը:

Նշվում է, որ տվյալ հատվածը գտնվում է Թեթրիծղարոյի մունիցիպալիտետի խիտ բնակեցված տարածքում. վերականգնման ճանապարհն անցնում է Ծինծղարո գյուղով եւ միանում Կոդա-Փարցխիսի մայրուղուն:

Ծրագրի արժեքը 8 մլն 699 հազար 999 լարի է եւ նախատեսվում է ավարտել 2023 թվականի հունիսին:

Ակտիվ շինարարության ընթացքի մեջ են նաեւ Թեթրիծղարո-Բոլնիսի հանրապետական նշանակության 5 կիլոմետրանոց ճանապարհի վերականգնման աշխատանքները:

Նշված հատվածը գտնվում է Թեթրիծղարոյի եւ Բոլնիսի մունիցիպալիտետների տարածքում թոփամի-Դաղեթի ճանապարհի վրա եւ անցնելու է Դիսվելի, Դաղեթի եւ Սամշվիլդե գյուղերով, ծրագիրը բաժանված է 3 հատվածի եւ, ընդհանուր առմամբ,

վերականգնվելու է 5 կիլոմետր ճանապարհ:

Վերականգնման նախագիծը նախատեսում է ճանապարհի տեխնիկական պարամետրերի բարելավում, ճանապարհի ծածկի վերականգնում, հեղեղատարների եւ առկա արհեստական կառույցների նորոգումն ու նորերի կազմակերպում, շենքերի բակերի եւ հասարակական տրանսպորտի սպասարահների մուտքերի կազմակերպում, ճանապարհի երթեւեկելի մասի զծանշում եւ ճանապարհային նշանների դասավորություն:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՆԻԿԻՏԱ ՄԻՄՈՆՅԱՆ - 96

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ՝ ՀԻԱՆԱԼԻ ՄԱՐԶԻԿԻՆ, ՄԱՐԶԻԶԻՆ, ՀՈՅԱՎԱԴ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ



Չորս օր առաջ, հոկտեմբերի 12-ին, լրացավ ֆուտբոլի աշխարհահռչակ վարպետ, 1956 թվականի Օլիմպիական խաղերի չեմպիոն, խորհրդային Միության քառակի չեմպիոն, խորհրդային Միության գավաթի երկակի գավաթակիր, «Ոսկե Արարատի» մարզիչ Նիկիտա (Մկրտիչ Պողոսի) Սիմոնյանի 96-ամյակը:

1926 թվականին, Արմավիրում ծնված Նիկիտա Սիմոնյանը ֆուտբոլի մարզաձեւում իր առաջին քայլերը կատարեց Սոխումիում, մարզիչ Շոթա Լոմինաձեի ղեկավարությամբ: Իր մարզական կարիերայի ընթացքում Նիկիտա Սիմոնյանը հանդես է եկել այն ժամանակվա այնպիսի ճանաչված ակումբներում, ինչպիսիք էին Մոսկվայի «Կրիլյա Սովետովը» եւ «Սպարտակը»: Տարիներ շարունակ Նիկիտա Սիմոնյանը համարվում էր մեկ խաղաշրջանում առավելագույն (34) գոլի հեղինակ:

Ներքին եղել է խորհրդային Միության հավաքականի գլխավոր մարզիչը:

Նիկիտա Պավլովիչի ծառայությունները երկրի ֆուտբոլի զարգացման գործում գնահատվել են «Պատվո շքանշանի», «Աշխատանքային կարմիր դրոշի», «Ժողովուրդների բարեկամության» շքանշաններով: Նա արժանացել է նաեւ համաշխարհային օլիմպիական կոմիտեի, ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի շքանշանների: 1992 թվականից Նիկիտա Սիմոնյանը Ռուսաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի առաջին փոխնախագահն է: Նա գլխավորում է «Ֆուտբոլը երեխաներին» բարեգործական հիմնադրամը:

«Վրաստան» թերթը եւ ընթերցողները սրտանց շնորհավորում են Նիկիտա Սիմոնյանին՝ ծննդյան օրվա առթիվ, մաղթում քաջառողջություն, երկարակեցություն:

ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ